**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ**

---

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,

1 փող. 38, Հեռ. (0222)63539

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 401
*20 հոկտեմբեր 2017թ.*

Հարգելի պարոն Գուլոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի որոշումները 2017թ-ի հոկտեմբերի 16-ից հոկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Կատ.՝ Ա. Պետրոսյան*
*Հեռ. 022263539*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**

**ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 261-Ա

## <<ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱԳՆԻ>> ԱՁ_ԻՆ ԺԱՄԸ 24.00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 962-Ն որոշման, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 26-ի N 6-Ն որոշման, <<Սիրանուշ Հովհաննիսյան Վահագնի>> ԱՁ-ի դիմումը, որոշում եմ

1. <<Սիրանուշ Հովհաննիսյան Վահագնի>> ԱՁ-ին տալ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն 2017թվականի հոկտեմբերի 16-ից 2017թվականի դեկտեմբերի 31-ը, ներառյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2017թ հոկտեմբերի 17

գ.Բալահովիտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

## ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 262-Ա

**<<ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱԳՆԻ>> ԱՁ_ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 26-ի N 6-Ն որոշման, հիմք ընդունելով <<Սիրանուշ Հովհաննիսյան Վահագնի>> ԱՁ-ի հայտը՝ որոշում եմ

1. <<Սիրանուշ Հովհաննիսյան Վահագնի>> ԱՁ-ին տալ 2017թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 2017թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 45 հասցեում գտնվող 30ք.մ զվարճանքի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2017թ հոկտեմբերի 16

գ.Բալահովիտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

## ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 263-Ա

## 2017ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի բյուջեի ապարատի 4111 հոդվածի /բաժին 1 խումբ 1 դաս 1/ նախատեսված գումարից 200.0 /երկու հարյուր հազար/ դրամ տեղափոխել մշակույթի 4251 հոդված /բաժին 8 խումբ 2 դաս 3/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 հոկտեմբերի 16

գ.Բալահովիտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

## ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 264-Ա

### 2017ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի բյուջեի արխիվային փաստաթղթեր 4231 հոդվածի /բաժին 1 խումբ 3 դաս 3/ նախատեսված գումարից

ա/ 200.0 /երկու հարյուր հազար/ դրամ տեղափոխել սոց.օգնության 4729 հոդված /բաժին 9 խումբ 4 դաս 1/

բ/ 100.0 /մեկ հարյուր հազար/ դրամ տեղափոխել սոց.օգնության 4729 հոդված /բաժին 10 խումբ 7 դաս 1/

գ/ 200.0 /երկու հարյուր հազար/ դրամ տեղափոխել փողոցային լուսավորության 4251 հոդված /բաժին 6 խումբ 4 դաս 1/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 հոկտեմբերի 17

գ.Բալահովիտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

## ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 265-Ա

ՔԱՂ՝ ՄԱՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, և հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող բնակարանային հարցերի հանձնաժողովի արձանագրությունը, որոշում եմ

1. Բալահովիտ համայնքի սոց.օգնության 4729 հոդվածից /բաժին 09 խումբ 04 դաս 1 ծրագրից/ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ փոխանցել ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն մագիստրատուրայի հաշվին ուսանողուհի՝ Մարի Գրիգորյանի, անվամբ, որպես ուսման վարձ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2017թ հոկտեմբերի 17

գ.Բալահովիտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

# ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 266-Ա

## <<ՕՋԱԽ>> ՍՊԸ_ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 26-ի թիվ 6-Ն որոշման, հիմք ընդունելով <<Օջախ>> ՍՊԸ-ի 2017թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը՝ որոշում եմ

1. <<Օջախ>> ՍՊԸ-ին գ.Բալահովիտ 9-րդ փողոց թիվ 2 հասցեի հիմնական շինության ներսում / 500ք.մ-ից ավելի/ տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2017թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2017թվական հոկտեմբերի 17

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 267-Ա

## <<ՕՋԱԽ>>ՍՊԸ_ԻՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 26-ի թիվ 6-Ն որոշման և հաշվի առնելով <<Օջախ>> ՍՊԸ-ի 2017թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը՝ որոշում եմ

1. Թույլատրել <<Օջախ>> ՍՊԸ-ին տեղադրել այլ արտաքին գովազդ, /20քմ/ 2017թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017թվականի դեկտեմբերի 31-ը գ. Բալահովիտ 9-րդ փողոց թիվ 2 հասցեում:

2. Հաստատել այլ արտաքին գովազդի էսքիզը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թվական հոկտեմբերի 17

գ.Բալահովիտ

Հավելված 2
Բալահովիտ համայնքի
ղեկավարի 2017թվականի
հոկտեմբերի 17-ի թիվ 267-Ա որոշման

ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶ




Համայնքի ղեկավար Կ.Գրիգորյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

## ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 268-Ա

### <<ՕՋԱԽ>> ՍՊԸ_ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Բալահովիտ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 26-ի N 6-Ն որոշման, հիմք ընդունելով <<Օջախ>> ՍՊԸ-ի 2017թվականի հուլիսի 3-ի հայտը՝ որոշում եմ

1. <<Օջախ>> ՍՊԸ-ին տալ 2017թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գ.Բալահովիտ 9-րդ փողոց թիվ 2 հասցեում գտնվող /500ք.մ և ավելի/ մակերեսով ռեստորանային համալիրում ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի իրացման վաճառքի թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թվական հոկտեմբերի 19

գ.Բալահովիտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

# ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 269-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, և հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող բնակարանային հարցերի հանձնաժողովի արձանագրությունները, որոշում եմ

1. Բալահովիտ համայնքի սոց.օգնության 4729 հոդվածից /բաժին 10 խումբ 07 դաս 1/ 130.0 /մեկ հարյուր երեսուն հազար/ դրամ տրամադրել Բալահովիտ գյուղի բնակիչներին, համաձայն հավելվածի, որպես անհատույց դրամական օգնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թվական հոկտեմբերի 19

գ.Բալահովիտ

Հավելված
Համայնքի ղեկավարի 2017թվականի
Հոկտեմբերի 19-ի թիվ 269-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների

ՑՈՒՑԱԿ

1.Եղիազարյան Արմեն 50000դրամ
2.Հովհաննիսյան Ջուլետա 40000դրամ
3.Հարությունյան Կիմա 40000դրամ

Ընդամենը 130000դրամ

Համայնքի ղեկավար Կ.Գրիգորյան